

## ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ ԵՒ ԻԹԵՍԼԻԶՄ<sup>1)</sup>

### IV

Այժմ դառնանք մատերիալիստական փիլիսոփայութեան տեսական արժեքը զնահատելու, տեսնենք, հիմնաւոր է արդեօք այն հայեացը, թէ ամենայն իրականութիւն մարմին է կամ նիւթ և նրա գործողութիւնը — Այս տեսութիւնը թերևս բաւարար լինի նիւթական աշխարհի հետազոտութեան նպատակների համար, սակայն նա բաւարար չէ իրականութիւնն ամբողջովին բացատրելու: Փիլիսոփայական շրջաններում ներկայումս սովորական է մատերիալիզմի անբաւարարութիւնը նախ և առաջ իմացարանական հիմունքներով բացատրել: Կանոնը նկատում է մատերիալիզմի հիմնովին խորակողը իւր իմացարանական իդէալիզմով: Նա ընդունում է ժամանակը և տարածութիւնը իրեւ ներքին, սուրյեկտիվ հայեցողութիւն. այս տեսութեամբ մարմինները, որ գոնուում են տարածութեան մէջ և իրանք տարածական են, ոչ թէ ինքն ըստ ինքեան գոյութիւն ունին, այլ երևոյթներ են: Մրանով նա ընդ միշտ անհնարին դարձրեց փիլիսոփայաբար մտածողների համար մատերիալիզմը իրեւ դաւանութիւն, կամ զոգմատիբական մատերիալիզմը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի պարզամիտ ոէալիզմ, որ երևոյթները բացարձակ իրերի տեղ է ընդունում: Մատերիալիզմի պատմաքանը՝ Լանգէն ասում է, որ Կանտի քննադատութիւնից յետոյ մատերիալիստական տեսութիւնն իսկապէս անախրնիզմ է, նրա գոյութիւնը և տիրապետութիւնը թիւրիմացութիւնն: Նոյն կերպով է վերաբերում Շոպէնհաուէր Կանտի կրիտիքական փիլիսոփայութեանը, որ երևան բերեց այն մեծ ճշմարտութիւնը, թէ չկայ արտաքին աշխարհ առանց ներքին աշխարհի, օբյեկտ առանց սուրյեկտի, մինչդեռ մատերիալիզմը անհիմն կերպով փորձում է սուրյեկտը օբյեկտից բացատրել, նրանից առաջ եկած համարել: Թողնելով սակայն իմացարանական

հիմունքների քննութիւնը, որ հայ ընթերցողների մեծամասնութեան համար հազիւ թէ հետաքրքրական լինի և հասկանալիք նկատենք միայն, որ մարդկային իմացութեան քննութիւնը և նրա մասին եղած խորհրդածութիւնները մատերիալիստական փիլիսոփայութեանը ցնուական հարուած են տալիս: Իմացութեան վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ մարմինները ոչ միայն բացարձակ իրական չեն, այլ առհասսարակ բացարձակ իրականութիւն չունին. նրանք միմիայն յարաքերական գոյութիւնունին, այսինքն երևոյթներ են մեր ներքին աշխարհի սուրբյեկտի համար: Մի մարմին սպիտակ կամ սև է, փափուկ կամ կոշտ, ձև և ծաւալ ունի, տեղ է բռնում և դիմադրութիւն է ցոյց տալիս մի ուրիշ մարմին նոյն տեղը բռնելու, այս բոլոր յատկութիւնները ոչ թէ ինքն ըստ ինքեան, արտաքին աշխարհում գոյութիւն ունին, այլ մեր զգայութիւնների չնորհիւ, մեր մտքի մէջ, չինէին մեր զգայութիւնները և մեր պատկերացումը, վերոյիշեալ երևոյթները գոյութիւն չէին ունենալ, իսկ եթէ այդ յատկութիւնները վերցնենք, մենք ոչ մի կերպով մարմին մասին գաղափար կազմել չենք կարող. ինչ է մարմինն ինքն ըստ ինքեան, անկախ այդ յատկութիւններից, մենք չգիտենք, ուրեմն և մեր համար գոյութիւն չունի: Շոպենաուեկը մի անգամ պարզ ներկայացնում է այդ հայեացքը սուրյեկտի և նիւթի մէջ տեղի ունեցող մի խօսակցութեան ձևով՝ այս կերպ: Նիւթն ասում է, «ես եմ, որ կամ, և ինձնից գուրս ոչինչ չկայ. աշխարհը իմ անցաւոր ձևն է. գու այս ձևի մի մասի արդիւնքն ես միայն և միանգամմայն պատահական, մի քանի վայրկեան ևս, և գու չկաս, իսկ ես մնում եմ հազարամեակից հազարամեակց: Մրա վրայ սուրյեկտն ասում է՝ «Անվերջ ժամանակը, որ դու կարծում ես թէ կտես, ինչպէս և անսահման տարածութիւնը, որ դու բռնում ես, գոյութիւնը ունին լոկ իմ պատկերացման մէջ, որի մէջ ես և դու և նրանով միայն գոյութիւն ունիս»:

Սակայն նպատակայարմար չէ մատերիալիստական աշխարհայեացքի հերքումը միմիայն իմացարանական դատողութիւններին թողնելու, Այսպիսի խորհրդածութիւնները թերեւս կարողանան զարմացնել, գուցէ և ցնցել, բայց նրանց չի յաջողուիլ յարատես հիմնաւոր համոզմունք առաջ բերել: Առաջին անգամ այդպիսի դատողութիւններ լսողը հեշտութեամբ կարող է այն զգացումն ունենալ, թէ իրան լեզուակոլս են անում: Ի հարկէ, կմտածէ նա, այդպէս ասել կարելի է, և թերեւս դժուար, կամ անհնարին լինի հերքել բայց և:

այնպէս ճշմարիտ չէ այդ: Ճշմարիտ է և մնում է ճշմարիտ այն, որ աշխարհը ինձնից առաջ և իմ պատկերացումից առաջ կար, որ արել, լուսինը, աստղերը և մեր երկիրը գոյութիւն ունեին, երբ դեռ ոչ մի աչք չկար նրանց տեսնող: Հենց որ հայեացքը ներքին, հայեցողութեան աշխարհից ուղղում է զէպի արտաքին աշխարհը, ճնշող զօրութեամբ վերականգնում է այն հաւատը, թէ այդ նիւթական մարմինների աշխարհն է հենց իրականութիւնը, և նրա գոյութիւնը պատկերացնող սուրյեկտից կախում չունի: Այս այնպէս լինելով, ով որ ուզում է մատերիալիստական տեսութեան անընաւարարութեան մասին համոզում կազմել տալ, չզէտք է բաւականանայ միմիայն իմացարանական խորհրդածութիւններով: Մատերիալիզմը ծագել է և պահպանւում է մետափիզիկայի, կամ բնութեան փիլիսոփայութեան հողի վրայ: ով որ ուզում է նրա դէմ մաքառել, պէտք է կանգնի նոյն հողի վրայ:

Մատերիալիզմի ամբողջ խնդիրն ամփոփում է այս նախադասութեան մէջ: ոչ միայն Փիզիքական աշխարհի, այլ նաև գիտակցութեան երեւոյթները նիւթի գործողութիւններ են: Նրանք նեարդային համակարգութեան բնախօսական գործողութիւններ են: Հիմնաւո՞ր է արդեօք այս: Խորազննին բնախօսները շարունակ մերժել են այս կարծիքը, ասելով, որ անհնարին է գիտակցութեան երևոյթները նիւթի շարժողութեամբ բացատրել: Այս մերժողների մէջ նշանաւորն է Դիւ-Բուա Ռայմոն: Իր բազմածանօթ աշխատութեան մէջ, որ կոչում է ընազիտութեան սահմանները<sup>1)</sup> նա այն կարծիքն է յայտնում, թէ Փիզիքական երեւոյթներն առանց բացառութեան բնագիտորէն պէտք է բացատրել, և այստեղ ոչ մի սահման չկայ, որտեղ բացատրելի երևոյթները վերջանան և սկսուին անբացատրելի երևոյթներ: Ֆիզիքական շատ երևոյթներ, որ ցարդ բացատրուած չեն, ինքն ըստ ինքեան անբացատրելի չեն. այսպէս, օրգանսական կեանքի սկզբնական կազմութիւնների ծագումը դեռ բացատրուած չէ, բայց ժամանակի ընթացքում կարող է բացատրուել և պէտք է բացատրուի ընական գիտութիւնների միջոցով: սկզբունքով ոչինչ չի կարող դրան արգելը լինել: Սակայն հէնց որ սկսում է գիտակցութեան առաջին տարրը՝ ամենանախնական դգայութիւնը, երեւան է գալիս մի նոր բան, որ հիմնովին տարբեր է Փիզիքական և օրգանսական երևոյթներից և միանգամայն չի ենթար-

<sup>1)</sup>) Ueber die grenzen der Naturkenntnis.

կտուա բնագիտական բացատրութեան։ Գիտակցութեան երեւան գալու համար անհրաժեշտ են օրգանական, նիւթական պայմանները, բայց նա բացատրելիք չէ իւր նիւթական պայմաններից, Ուղեղի կազմութեան և գործողութիւնների ճիշտ ծանօթութիւնը, — ամենամեծ բանը, որ կարող ենք պահանջել բնագիտութիւնից, մեղ ուրիշ ոչինչ չի ցոյց տալիս, բայց եթէ նիւթ, շարժողութեան մէջ զրուած, Սակայն նիւթական մասնիկների ոչ մի հնարաւոր շարժողութեամբ կամ դասաւորութեամբ չի կարելի կամուրջ ծգել դէպի գիտակցութեան աշխարհն, չի կարելի բացատրել գիտակցութեան երեսոյթները՝ զգայութիւն, պատկերացում, զգացում և կամք, Դիւ-Բուա-Ռայմոն վերջացնում է իր բացատրութիւններն այսպիսի խօսքերով. «Մարմարական աշխարհի գաղտնիքների վերաբերմամբ բնախոյզը վազուց սովորել է առնական քաջութեամբ հրաժարուել՝ և ասել ignoramus (չգիտենք), բայց ի նկատի առնելով գիտութեան անցկացած յաղթավան ընթացքը, նրա մէջ լուելեայն այն գիտակցութիւնը կայ, որ այն, ինչ որ այժմ նա չգիտէ, գոնէ նպաստաւոր պայմաններում կարող էր իմանալ և մի ժամանակ թերևս կիմանայ։ Սակայն ինչ վերաբերում է այն առեղծուածին, թէ ինչ է նիւթ և ոյժ, և ինչպէս նրանք մտածել կարող են, նա պէտք է քաջութիւն ունենայ մի անգամ ընդմիշտ այն ճշմարիտ, բայց դժուարին խոստովանութիւնն անելու, թէ ignoramus, — չենք կարող իմանալ։»

Դիւ-Բուա-Ռայմոնի վերոյիշեալ աշխատութիւնը լոյս տեսաւ 1872 ին. Նրանից քիչ առաջ, 1868 ին Անգլիացի բնագէտ Տինդալ (Tyndall) բնախոյզների ժողովում կարդացել էր մի դասախոսութիւն, որի մէջ նոյնանման մաքեր էր յայտնել, նրա ամենաարտայայտիչ խօսքերն են. «Ուղեղի նիւթական գործողութիւնից դէպի համապատասխան գիտակցութեան երեսոյթը որեւ է անցուա անհնարին է մնածել։ Ընդունելով հանդերձ, որ գիտակցութեան երեսոյթի հետ միաժամանակ ուղեղի մէջ կատարւում է մասնիկային շարժողութիւն, այնու ամենայիշ մենք հնարաւորութիւն չունինք մտածողութեան որմէս պրոցեսով մէկից միւսին անցնելու Ուղեղի մասնիկների գործողութիւնը և մտածողութեան երեսոյթը կատարւում են միասին. Սակայն մենք չգիտենք ինչո՞ւ եթէ մեր զգայարանքներն այնքան զարգացած և լուսաւոր լինէին, որ մենք ուղեղի մասնիկներն իսկ կարողանայինք տեսնել և զգալ, ընդունակ լինէինք նրանց շարժումներին, նրանց համախմբումներին և ելեքտրական արտացոլումներին, — եթէ ի հարկէ կան, — հետևելու,

և եթէ մենք ամենաճիշտ կերպով ծանօթ լինէինք դրանց համապատասխան, դրանց հետ միաժամանակ երևան եկող մտածողութիւններին, զգացումներին, այնու ամենայնիւ, մենք աւելի քան երբ և իցէ հեռու կլինէինք այն առեղծուածի լուծումից, թէ ինչպէս են այս Փիզիքական իրողութիւնները գիտակցութեան իրողութիւնների հետ կապուած» (Tyndall, Fragmente aus den Naturwissenschaften).

Արդարև, գիտակցութեան երևոյթների ծագումը շարժողութեան երևոյթների ծագումից բացատրել երբէք չի յաջողուիլ: Եթէ յիրաւի աշխարհում սկզբից ի վեր ոչինչ չկայ, բայց եթէ ատոմներ և շարժողութիւն, ապա ըստ ինքեան թերեւ հնարաւոր է նրանցից ամբողջ նիւթական աշխարհը, իր բոլոր տիեզերական և օրգանական ձեւինսութիւններով և շարժողութիւններով, առանց միացորդի բացատրել: Մի բան սակայն հնարաւոր չի լինի և անհասկանալի կը մնայ, թէ ինչպէս ատոմների այս համախմբումը, - որքան ուզում է նրանք նուրբ լինին և նրանց դասաւորութիւնն ու շարժումները բաղադրեալ, — երբ և իցէ պէտք է այն աստիճանին հասնէր, որ ինքն իր վրայ անդրադառնար, իւր մասին և իրանից դուրս եղած աշխարհի մասին մտածէր: Նոյն իսկ ամենակատարեալ մտքի համար, որ խորաթափանց սրամտութեամբ ատոմների բոլոր հանգամանքները դիտում է, պէտք է սա պարզապէս մի անսպասելի երևոյթ լինէր: Շատ տեղին է ասուած, թէ եթէ մատերիալիզմը իրաւունք ունենար, այն ժամանակ ամեն բան աշխարհի մէջ բացատրելի կը լինէր, միայն նա ինքը, տիեզերքի մատերիալիստական տեսութիւնն անբացատրելի կը մնար, Ատոմները կարող են ամեն բան առաջ բերել: բայց փիլիսոփայութիւն անել և իրանք իրանց մասին գաղափար կազմել, — թէ նրանք այդ ևս կարող են, կը մնայ ընդ միշտ, նոյն իսկ այդ տեսութեան ամենաճարտար կողմնակիցների համար, անըմբնելի: Պակաս զարմանալի երևոյթ չէ նաև, որ ատոմների անթիւ դասաւորութիւնների մէջ, որոնք բնութեան ընթացքի մեքենական օրէնքներով անսկիզբն ժամանակներից սկսած ծագում և անցնում են, մի անդամ էլ ատոմների մի խումբ է հանդէս գալիս, իրը շահագրգռութիւն է ցոյց տալիս իւր պահպանութեան համար, ցանկանում է իւր վիճակը շարունակել և մի ներքին դժկամակութիւն ունի դէպի իւր լուծումն ու քայլայումը: Նրա համար, ով որ փորձում է բացատրել, թէ աշխարհը տառմներից է կազմուած, որոնց էութիւնը որոշում է նրանով, որ միմիայն ծաւալ և շարժողու-

թիւն ունին, — այդպիսի մէկի համար ապրելու ձգտումը, կամ քը նոյնպիսի մի անօրինակ երևոյթ է բնութեան ընթացքի մէջ, ինչպէս գիտակցութիւնը և մտածողութիւնը: —

Դիւ-Բուա-Ռայմոն կատարելապէս համաձայն է, ասում է յատերիալիստը, որ գիտակցական երևոյթը նիւթական պայմաններից կախումն ունի. Նա իրան, շատ լրածը է զգում դոգմաներից և հին փիլիսոփայութիւնից, որոնք հաւատում էին մի առանձին հոգեկան գոյացութեան (substance). Նա ևս տեսնում է, որ հազարաւոր դէպքերում նիւթական պայմաններն են առաջ բերում հոգեկան կեանքը: Իւր անհամապաշտ հայեացքով նա ոչ մի հիմք չի գտնում կասկածելու, որ յիրաւի զգայական տպաւորութիւններն են հաղորդում ուղեղին և առաջ են բերում հոգեկան երևոյթ: Նա ստիպուած է ընդունել այն տեսութիւնը, թէ հոգին աստիճանաբար զարդացել է իրեւ արդիւնք որոշ նիւթական համախմբումների. համաձայն է, որ հոգեկան գործունէութիւնը ծնունդ է ուղեղի նիւթական պայմանների: Սխալ և անհիմն է համարում նա միայն այն, որ բնագիտական հայեացքի տէր մարդիկ այնպէս են պատկերացնում, թէ հոգեկան գործունէութիւնը առաջ է գալիս ուղեղի կազմութիւնից այնպէս, ինչպէս զանազան արտաթորումներ գեղձերի կազմութիւնից: Ուրեմն նա չի հերքում այն իրողութիւնը, որ հոգեկան գործունէութիւնը, միայն նրանց առնելութիւնը համարում է անըմբռնելի. Նիւթի շարժողութիւնները գիտակցական երևոյթներ առաջ են բերում, միայն ինչպէսը մնում է անբացատրելի:

Այսպէս ամփոփելով Դիւ-Բուա-Ռայմոնի բացարութիւնները, մատերիալիստ փիլիսոփան կարող էր առարկել. գուցէ այդ այդպէս է, թէ ինչպէս ատոմները մտածում են և զգում, այդ մենք չգիտենք և թերևս երբէք չենք իմանալ. բայց միթէ այստեղ մի արտասովոր բան կայ՝ միթէ բնագիտական բացատրութիւնը նրանումն է, որ որևէ երևոյթի մէջ կարողանայ ցոյց տալ, թէ ինչպէս պատճառը հետևանք է առաջ բերում, Ֆիզիկան բացատրում է ծանրութեան օրէնքի վերաբերեալ բազմաթիւ երևոյթներ, քարի ընկնելը, գետի հոսելը, օդապարկի բարձրանալը, մակնթացութիւնն ու տեղատևութիւնը, մոլորակների շարժումը: Նա ցոյց է տալիս, որ այս բոլոր շարժումները ենթարկում են ծանրութեան օրէնքին. բայց ցոյց է տալիս արդեօք, թէ մարմիններն առնասարակ ինչպէս են միմեանց ձգում, կամ թէ ինչու նրանք մղում ունեն դէպի-

միմեանց շարժուելու, ամենախն ոչ նոյպէս և քիմիան չի-  
կարողանում բացատրել, թէ ինչու այս ինչ տարրերն այս ինչ  
յարաբերութիամբ միմեանց հետ միանում են, կամ ինչու նը-  
րանք առհասարակ միանում են նոյնն է վերջապէս մեքենա-  
կանութիան մէջ. թէ ինչպէս մի մարմին միւսին ընդհարուելիս  
իր շարժումը նրան է հաղորդում, մեքենագիտութիւնն այդ չի-  
բացատրում, այլ միայն իրողութիւնը. վերածում է մի բանա-  
ձեի: Այսպիսով ուրիշն, մի երեսոյթ բացատրել բնական գի-  
տութիւնների մէջ նշանակում է գտնել մի բանաձե, որի  
օգնութեամբ կարելի լինի երեսոյթի կապը ուրիշ երեսոյթների  
հետ իմանալ, նախատեսել այդ երեսոյթը, հաշուել, նոյնպէս և,  
նայելով պայմաններին, առաջ բերել. Այս կարծիքին է նաև  
Դիւ-Բուա-Ռալմոն. թէ ինչ է ոյժը, կամ թէ ինչպէս է սկսում  
շարժողութիւնը սկզբնապէս, ինչպէս և նիւթի էութիւնը, նրա  
համար անդրդպայական խնդիրներ են:

Ուրիշն, այսպէս է եզրափակում մատերիալիստ փիլի-  
ստիան, ուրիշ բան չպէտք է պահանջել երբ ինդիրը վերա-  
բերում է գիտակցութիան երեսոյթների բացատրութեանը:  
Բնագիտութիան տեսակէտից նրանք բացատրուած են, եթէ  
յաջողուի բնաձեներ կազմել, որոնց հիման վրայ նրանց առաջ  
գալը իրեն հետևանք ուրիշ երեսոյթների, այն է ուղեղի բնախօ-  
սական երեսոյթների, կարելի լինի նախատեսել: Եթէ մենք  
իմանայինք, թէ ուղեղի քջիջների և հաղորդիչ թելերի այսինչ  
փոփոխութիւններին, հետևում է իւրաքանչիւր անգամ այսինչ  
պատկերացումը կամ այդ տեսակ և այսպիսի սաստկութեամբ  
մի զգացում, այն ժամանակ իմացած կըլինէինք այն ամենը,  
ինչ որ իրեն գիտնական հետազոտողներ պէտք է իմանայինք:  
Թէ ինչպէս է յաջողուում բնախօսական երեսոյթին զգացողու-  
թիւն առաջ բերել, այդ մենք չփիտենք, և դրա համար ոչ ոք  
չի կարող մեզ մեղադրել, քանի որ մենք նոյնպէս չփիտենք,  
թէ ինչպէս է մի շարժում ուրիշ շարժում առաջ բերում: Սա-  
կայն սկզբունքով ոչ մի արգելք չկայ, որ ուղեղի բնախօսու-  
թեանը ևս մի ժամանակ կըյաջողուի այսպիսի բանաձեներ  
ունենալ: Արդիօք յիրաւի այդ կէտին կըհամսնենք, արդիօք  
ուղեղի բնախօսութիւնը երբ և իցէ կարող կըլինի մասնիկների  
այն շարժումները բացատրել, որոնց իրեն հետևանք առաջ է  
գալիս այսինչ զգացողութիւնը կամ մտածողութիւնը, սա մի  
ինդիր է, որի մասին այժմ ոչինչ չենք կարող ասել. եթէ  
միայն ընդունենք, որ այս հնարաւոր է, դրանով ընդունած  
կըլինենք նաև, որ հնարաւոր է գիտակցութեան երեսոյթը:

Փիզիքական պատճառներից բացատրել, այն մոքով որ բացատրութիւնը բառը բնական գիտութիւնների մէջ ընդհանրապէս գործ է դրում:

Մատերիալիստը իրաւամբ կարող է այս առարկութիւններն անել, եթէ համաձայննք, որ Փիզիքական և հոգեկան երևոյթների մէջ պատճառական յարաբերութիւն կայ. այսինքն, եթէ ընդունենք, որ Փիզիքական երևոյթներն են հոգեկանների պատճառը և ընդհակառակը: Սակայն մենք կարող ենք մի բայլ առաջ դնալ և ասել, որ Փիզիքական եւ հոգեկան երեւոյթների մէջ տեղի չունի որ եւ է պատճառական յարաբերութիւն. գիտակցութեան երեւոյթները ոչ հետեւանք են եւ ոչ պատճառ Փիզիքական երեւոյթների: Դիւ-Բուա-Ռայմոն արտայայտել է այն միտքը, թէ անհնարին է մտածողութիւնը համարել Փիզիքական պատճառների արդիւնք: Շարժումը կարող է միմիայն շարժում առաջնքերել կամ դառնալ դադարած էներգիա, մեքենական պատճառը՝ առաջ է բերում մեքենական արդիւնք: Հոգեկան երեւոյթները, որ կատարւում են Փիզիքականների հետ միաժամանակ կամ զուգընթաց, մեր հասկացողութեան համար այսպիսով բաւարար հիմք չեն գտնում. Նրանք գուրս են պատճառականութեան օրէնքից, այսինքն գուրս են մեքենական պատճառական շարքից:

Այս ցոյց տալու համար նախ պէտք է ճշտիւ որոշել մատերիալիստական տեսութեան էութիւնը: Գրուածքների մէջ պատահում են զանազան բանաձևեր, որ կարելի է վերածել երկու հիմնական բանաձևի. <sup>1)</sup> գիտակցութեան երեւոյթները հետեւանք կամ ներգործութիւն են Փիզիքական երեւոյթների, <sup>2)</sup> գիտակցութեան երեւոյթները ինքն ըստ ինքեան կամ օբյեկտիւ նայելով ուրիշ ոչինչ են, բայց եթէ Փիզիքական երեւոյթներ ուղեղի մէջու Այս երկու բանաձևերը իսպն պատճում են մատերիալիստական գրուածքների մէջ: Այսպէս, Բիւմները բացատրում է մի անգամ հոգեկան երեւոյթները իրու արդիւնք, ներգործութիւն ուղեղի գործունէութեան. թէ ինչպէս են նրանք նիւթական համախմբումներից առաջ գալիս, կարող է դարձեալ ինդիր լինել, բաւական է իմանալ, որ Շնիւթական շարժումները զգայարանների միջոցով ազդում են հոգու վրայ և նրա մէջ շարժումներ են առաջ բերում, և սրանք իրանց հերթին նորից նեարդերի և մկանների մէջ նիւթական շարժումներ են առաջ բերում:

Սրա հետ միասին գտնուում է երկրորդ բանաձևը. «մտածողութիւնը կարող է նկատուել եւ պէտք է նկատուի

տիեզերքի մէջ կատարուող ընական շարժողութիւնների մի առանձին տեսակը, որը ուղեղի կեդրոնական մասնիկների նիւթին նոյնքան յատուկ է, ինչքան կծկուելը մկանների նիւթին, կամ լոյսի տատանումը տիեզերական եթերին։ Այս հայեացքը, ըստ Բիւխների, ոչ միայն տրամարանական անհրաժեշտութիւն է, այլ և փորձնականապէս ապացուցուած, յատկապէս այն փորձերով, որոնք ցոյց են տալիս, որ հոգեկան գործողութիւնները կամ մտածողութեան շարժումներն իրանցընթացքը կատարելու համար ժամանակի պէտք ունին։ «Սրանից հետեւում է այն անհրաժեշտ եզրակցութիւնը, թէ հոգեկան կամ մտածողութեան գործողութիւնը կատարուում է մի տարածական, դիմադրութիւն ցոյց տուող և բաղադրեալ նիւթի մէջ, և որ այդ պատճառով այդ գործողութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ շարժողութեան մի տեսակը։ Վերոյիշեալ բացատրութիւններից պարզ չի որոշուում գիտակցական կամ հոգեկան երևոյթների էութիւնը և նրանց իսկական առնչութիւնը նիւթի գործողութեան հետ, Բիւխներ իւր Էրաֆ առ Տօֆֆ գըրքի մէջ հետեւեալ երեք որոշումները միմեանց հետ շփոթում է։

<sup>1)</sup> մտածողութիւնը շարժողութիւն է, <sup>2)</sup> մտածողութիւնը շարժողութեան հետեւանը է, <sup>3)</sup> մտածողութիւնը սերտ կապուած չ շարժողութեան հետ, և մտածողութիւնը ու տարածականութիւն կարող են միևնույն էութեան երկու կողմերը նկատուել, և այդ էութիւնը իւր իսկական բնութեամբ մեզ անծանօթ է։

մուռաւ։

Եթէ մատերիալիզմը վճռականապէս՝ պաշտպանէ այն բանաձնեց, թէ հոգեկան երևոյթն ինքն ըստ ինքեան ուրիշ բան չէ, բայց եթէ ֆիզիքական պրոցես, այդ դէպքում նա միանգամայն անհերքելի է։ Այն միաբը, թէ մտածողութիւնն ուրիշ ուշնչ է, եթէ ոչ շարժողութիւն ուղեղի մէջ, զգացումներն ուրիշ ոչինչ են, եթէ ոչ ընախօսական երևոյթներ, միանգամայն չի կարելի հերքել, ի հարկէ, ոչ այն պատճառով, որ ճշշմարիտ է, այլ այն պատճառով, որ բացարձակապէս անմիտ է։ Եւ անմիտ ճշմարտութեան նման այն առաւելութիւնն ունի, որ չի կարող հերքուել։ Մտածողութիւնն էապէս ուրիշ բան չէ, բայց եթէ շարժողութիւն, սա այնպիսի մի կարծիք է, որի դէմ չի կարելի վիճել. կարելի է միայն ասել, միտք ասելով հասկանում ենք միտք, և ոչ շարժում. այսպէս ևս բարկութիւն և երկիւղ առելով հասկանում ենք բարկութիւն և երկիւղ, և ոչ թէ արեան անօթների նեղացում կամ լայնացում։ Այս վերջին երևոյթները միշտ տեղի են ունենում, երբ առաջինները տեղի

են ունինում, սակայն նրանք չեն մտքերը կամ զգացումները։ Խնչպիսի բացատրութիւններ ուղում են տան, շարժումը շարժում է, և նրա մէջ մտքի նշոյլն անգամ չկայ։ Մենք գիտակցում ենք մեր մտքերն ու զգացումները։ Նսարդերի և երակների շարժողութիւնը մենք չենք գիտակցում. այդ գիտէ միայն բնախօսը, սակայն նա այդ մասին մի ուղիղ բան չգիտէ։ Երբ բնախօսութիւնը յիշեալ մարմնական երևոյթների մասին աւելի ճիշտ բան կըսովորեցնէ, բնախօսը, երևի, ալ ևս չի խօսիլ մտքերի և զգացումների մասին, այլ միայն այն մասին, ինչ որ նրանք իսկապէս և օրյեկտիւ նկատած են, այսինքն՝ շարժումների մասին։ Եթէ պատահի, որ նա սիրահարուի, այլ ևս իր սէրը չի յայտնիլ, այլ իր սրտի սիրածի հետ կըխօսի իր նեարդերի և երակների այս կամ այն մասի բնախօսական պրոցեսսի մասին, և կարծելով թէ դրանով ամեն ինչ ասաց և իր ներքին, հոգեկան վիճակը ներկայացրել։ Բայց չէ՞ որ սա ակներեկ անստութիւն է։ Ուրիմն, որպէս զի առհասարակ վիճաբանութիւն հնարաւոր լինի, մատերիալիստը պէտք է մի կողմ թողնի այն բանաձեռը, թէ միտքը շարժողութիւն է, և պէտք է ընդունէ, որ միտքը շարժողութիւն չէ, այլ միտքը։ Եթէ փորձը ցոյց է տալիս, որ նա կանոնաւոր և մշտական առնչութիւն ունի նիւթի շարժողութեան հետ, ապա ուրիմն գիտութեան խնդիրն է այս առնչութեան բնութիւնը որոշելու։

Այսպիսով ուրիմն, Փիզիքական և հոգեկան երևոյթների նոյնացումը անհնարին է, մնում է հնարաւոր այդ երկոյթների առնչութեանց երկու տեսակ. կամ պատճառական առնչութիւն կամ ժամանակական ընթացակցութեան առնչութիւն. այսինքն, կամ Փիզիքական երևոյթները առաջ են ըերում հոգեկան երևոյթներ և ընդհակառակը, կամ այդ երկու տեսակ երևոյթները կատարում են միաժամանակ, միմեանց հետ զուգընթաց, բայց միմեանցից անկախ։ Սրանք են այն երկու տեսութիւնները, որ փիլիսոփայական մտածողութիւնը մարմնի և հոգու առնչութեան մասին հանդէս է բերել տասնեօթերորդ դարից սկսած, իբրև միակ հնարաւոր տեսութիւնները փոխադարձ ազդեցութեան տեսութիւնը և ընթացակցութեան կամ զուգընթացութեան տեսութիւնը։ Այս երկու հայեացքները շարունակ միմեանց հետ մրցում են, և մենք ընտրութիւն կարող ենք անել երկու հայեացքների մէջ։

Նախ օրինակներով պարզենք այս երկու տարբեր տեսութիւնները։ Մէկը գնում է փողոցով. յանկարծ նրա անունը տալով կանչում են. նա շուռէ գալիս և ուղղում է դէպի կանչողը։

Բնախօսն այս երևոյթը կըբացատրէր զուտ մեքնականութեամբ։ Զայսի ալիքները ներդործեցին լսողութեան գործարանի վրայ, առաջ բերին որոշ գրգռում լսողութեան նեարդերի մէջ, այդ գրգռումը հաղորդուեց կենդրոնական գործարանին, այստեղ առաջ եկան ֆիզիքական երևոյթներ, որոնք գրգռեցին շարժիչ նեարդերը, և դրա հետևանքն եղաւ շուռ գալը և մարմնի շարժուելը ձայնի ուղղութեամբ։ Այս բոլոր երևոյթները կազմեցին ֆիզիքական գործողութիւնների անընդմիջուող շարժ։ Սրան ընթացակից կատարուեց մի ուրիշ պրոցես, որից ընախօսը իրեւ բնախօս ոչինչ չի տեսնում և կարիք չունի տեսնելու, բայց որը նա գիտէ իրեւ գիտակցող և իւր զգացողութիւնները դիտող մարդ։ Լսողութեան զգացութիւնները առաջ բերին պատկերացումներ և զգացումներ. կանչուողը լսեց իր անունը, շուռ եկաւ, կոչի սկզբնապատճառը և նպատակը իմասնալու, նա տեսաւ մի հին ծանօթ և գնաց նրան բարեկլու։ Այս երևոյթները կատարում են, դարձեալ առանց ընդմիջուելու, ֆիզիքական երևոյթներին զուգընթաց։ Ոչ ֆիզիքական գործողութիւնների շարքն է ընդհատում հոգեկան գործողութիւններով և ոչ հակառակը, ֆիզիքական գործողութիւնն առաջ է բերում յաջորդ ֆիզիքական գործողութիւնը և հոգեկանը՝ յաջորդ հոգեկան գործողութիւնը։ Եթէ նեարդային շարժումն է զգացողութիւն առաջ բերում, ապա ուրեմն նա իրեւ շարժում պէտք է չըանայ։ Ա գնդակի շարժումը առաջ է բերուկ Յ գնդակի շարժումը։ Նշանակում է, առաջին շարժումն անհետանում է, նրա փոխանակ սկսում է երկրորդ գնդակի շարժումը։ Շարժումը առաջ է բերում ջերմութիւն։ Նշանակում է շարժումը անհետանում է, նրա փոխանակ առաջ է գալիս որոշ չափով տաքութիւն։ Նոյնը պէտք է տեղի ունենար վերոյիշեալ դէպքում։ Եթէ շարժումն է առաջ բերում զգացողութիւն և պատկերացում, ապա ուրեմն նա իրեւ շարժում պէտք է դադարէր։ բայց քանի որ ֆիզիքական շարժումը անընդհատ շարունակում է, իսկ պատկերացումներն ու զգացողութիւնները կատարում են նրա հետ միաժամանակ, ուրեմն նրանք ֆիզիքականի հետևանք չեն, նրանից չեն առաջ գալիս։ Բնագէտը, իրեւ բնագէտ, գործ ունի ֆիզիքական երևոյթների հետ և կարող է միանգամայն անուշադիր թողնել ընթացակից գիտակցութեան երևոյթները։

Արդ, այս երկու հնարաւոր տեսութիւններից մըն է համապատասխանում իրականութեանը։ —

Քանի որ հարցն իրողութիւններին է վերաբերում, ուստի

այս մասին փորձի միջոցով միայն կարելի է վճիռ կայացնել։ Զուտ փիլիսոփայական դատողութիւններով Պառլամէն համարում է փոխաղարձ ազդեցութեան տեսութիւնն էլ հնարաւոր։ Պատճառի և հետևանքի կանոնաւոր յաջորդականութիւն տեղի ունի Փիզիքական և հոգեկան երևոյթների մէջ։ Բնական աշխարհի երևոյթների մէջ ևս մենք կարող ենք իմասնալ միմիայն պատճառի և հետևանքի յաջորդականութիւնը։ Կարելի է մտածել, որ որոշ դէպքերում շարժողութիւնն իրբև հետևանք առաջ է բերում մի այնպիսի երևոյթ, որ զգայական դիտողութեանը մատչելի չէ և այդ պատճառով դուրս է մնում Փիզիքական աշխարհի մէջ առաջ եկող պատճառական շարքից։ Այսպէս հնարաւոր է մտածել, քանի որ հակասութիւն չէ, ուրեմն և տրամարանական մտածողութեամբ չի կարելի հերքել։ Մնում է փորձը. արդեօք սա վճիռ տալիս է յօդուտ այս կամ այն տեսութեան. արդեօք հիմնաւոր դիտողութիւններ կամ փորձեր եղել են, որոնց հիմնա վրայ մի տեսութիւնը մերժուի, միաւը, իրբև միակ հնարաւոր, ընդունուի։ Պառլամէն չի կարծում, թէ գտնուի մէկը, որ խնդիրն հիմնաւորապէս ուսումնասիրելուց յետոյ այս հարցին դրական պատասխան տայ:

Դիտողութիւնն ու փորձը անզօր են այս անմատչելի և օրդանական կեանքի ամենարաղադրեալ երևոյթների առաջ, Բնագիտական աշխարհում էլ կան ընդունուած ճշմարտութիւններ, որոնք հաստատուած չեն դիտողութեամբ և փորձով։ Եներգիայի պահպանութեան օրէնքը հիմնուած չէ փորձի վրայ. փորձով չեն իմացել, թէ տիեզերքի մէջ զանազան ժամանակներում էնէրգիայն ինչ քանակութիւն կայ. այդ տեսութիւնը մի աքսիոս է, մի սկզբունք, որ միտքը, ի հարկէ իրողութիւնների վրայ հիմնուած, հետազոտութիւններին իրբև հիմք է ծառայեցնուած։ Մեզ հետաքրքրող խնդրի վերաբերմամբ մանաւանդ հիմնաւոր էմպերիքական հաստատութիւններ տեղի չեն ունեցել և, հաւանօրէն, երբէք, տեղի չեն ունենալ Սակայն ընադիտը իր գիտութեանը հաւատարիմ մնալով, չի կարող ընդունել նիւթի և հոգու երևոյթների փոխաղարձ ազդեցութեան տեսութիւնը։ Քանի որ Փիզիքական պրոցեսը առանց ընդմիջուելու շարունակում է յաջորդաբար, ուստի նա չի կարող ընդունել, թէ շարժումը մի ուրիշ տեսակ շարժում կամ դադարաց. էներգիա չդառնայ, այլ մի ուրիշ բան, որ Փիզիքապէս առհասարակ գոյութիւն չունի։ Այս ընդունելով, նա ընդունած կըլինի, թէ էներգիան, նիւթի շարժողութիւնը բացարձակ (առանց պատճառի) ծագում է առնում և կորչում։

Շարժողութեան փոխանցումը մտածողութեան, Փիզիքական էներգիայինը՝ զուտ գիտակցական երևոյթի ընագիտական մտածողութեան համար նոյն է, ինչ որ էներգիայի ոչնչացում, նոյնպէս և շարժողութեան ծագումը հոգեկան մի բանից, դիցուք ցանկացածի պատկերացումից, Փիզիքայի համար նոյն է, ինչ որ էներգիայի ծագումը ոչնչից: Ըստ այս ընագէտը չի կարող ընդունել փոխադարձ ազդեցութեան տեսութիւնը և առաւելութիւն պէտք է տայ զուգընթացական տեսութեանը: Ընդունելով այն իրողութիւնը, որ Փիզիքական երևոյթներին ընթացակից կատարում են հոգեկան երևոյթներ, նա իւր ուսումնասիրութեան առարկայ է դարձնում առաջին երևոյթների յաջորդական շարքը, իսկ միւսների հետ, որոնք նրա ուսումնասիրութեան միջոցներին չեն ենթարկում, նա գործ չունի:—

Եթէ այս դիլեմման առաջարկուի մատերիալիստ փիլիսոփային, այսինքն ընդունել երկուսից մէկը. կամ փոխադարձ ազդեցութեան և կամ զուգընթացութեան տեսութիւնը, նա ևս կանցնի վերջինիս կողմը: Եթէ գիտակցութեան երևոյթները իրեւ շարժողութեան երևոյթների հետևանք չեն բացատրում, իրողութիւն է, որ նրանց հետ կանոնաւոր կերպով կապուած են: Այս տեսութեամբ կը պահուի նաև Փիզիքական էներգիայի պահպանութեան օրէնքը, որ նրա համար ևս սուրբ է: Զգացումները և պատկերացումները ուղեղի գործողութիւններին ընթացակից ընդունելով, առնչութիւնը նոյնը կմնայ, հոգեկան երևոյթները ևթէ ոչ հետևանք կամ արդինք, "գոնէ անդրադարձում են Փիզիքական երևոյթների: Ուղեղի գործողութիւնը նիւթի գործողութիւն է, իսկ զգացողութիւն, պատկերացում և զգացում նրա սուբյեկտիւ անդրադարձումը: Այս միտքը գոնում ենք Բիւխների գրքում. «մտածողութիւնը և տարածականութիւնը միննոյն էութեան երկու կողմերն են» (եր. 300.): «Հոգի և բնութիւն վերջ ի վերջոյն նոյնն են. տրամաբանական օրէնքները և մեքենականութեան օրէնքները միևնոյն օրէնքներն են, բնութեան բանականութիւնը մտքի բանականութիւնն է» (եր. 127): Այսպիսով բոլոր կարծիքները միանում են զուգընթացական տեսութեան վրայ:

Պառլաէն ընդունում է զուգընթացական տեսութիւնը իմացաբանական վերապահութեամբ. այսինքն, Փիզիքական և հոգեկան աշխարհները միևնոյն չափով իրական չեն. բացարձակ իրական է հոգեկան աշխարհը, իսկ մարմնական աշխարհը յարաբերական չափով իրական է. նա սոսկ երևոյթ է:

Այժմ մի ակնարկ ձգենք զուգընթացական տեսութեան լուսաց:

Վրայ փիլիսոփայութեան պատմութեան ընթացքում, տեսնենք նա ինչ տեղ է բնաել պատմութեան մէջ և ինչպէս է զարգացել։ Նախընթացից արդէն տեսանք, որ այդ տեսութիւնն ամենից առաջ կերպով արտայայտել է Սպինոզան։ Իրականութիւնը մի ամբողջական գոյացութիւն է, որին կարող ենք անուանել բնութիւն կամ Աստուած։ մարմնական և հոգեկան աշխարհները նրա արտայայտութեան երկու կողմերն են, և մէկի մէջ կատարուած երևոյթներին զուգընթաց եւ համապատասխան են միւսի մէջ կատարուած երևոյթները։ Լայքնից այս տեսութեանն իդէալական ուղղութիւն առնեց, գերադաս համարելով հոգեկան տարրը։ Մարմինների աշխարհը նա համարում է սոսկ երևոյթ, մինչդեռ իսկական իրականութիւնը մի համակարգութիւն է հոգեկան բազմաթիւ գոյացութիւնների, որոնց նա անուանում է մոնադներ։ Լայքնիցը ստորեց փիլիսոփայութեան մէջ նաև անզիտակցական հոգեկան կեանքի գաղափարը, որով միայն հնարաւոր է լինում ըմբռնել, թէ հոգեկան երևոյթներ տեղի են ունենում ոչ միայն մարդու և կենդանիների, այլ և բուսական և նոյն իսկ անօրդանական աշխարհների մէջ, և հոգեկան ու մարմնական երևոյթների զուգն աշխացութիւն տեղի ունի ոչ միայն կենդանի էակների, այլ և համայն բնութեան մէջ։ Կանտ իր բնապանցական աշխարհահայեացքով մնում է Լայքնիցի տեսութեան հովի վրայ, սակայն մարդկային իմացութեան քննադատական հետազօտութիւնը նրան մղում է իրականութեան հոգեկան կողմը և իրեւ սոսկ երևոյթ ընդունելու, այնպէս որ ստացւում է մի տեսական երևութական զուգընթացութիւն։ Այսպիսով կունենանք այս շարքը ըստ Սպինոզայի, երկու կողմերն էլ՝ թէ հոգեկան և թէ մարմնական։ Իրական են. ըստ Լայքնիցի հոգեկան կողմն է իրական, իսկ մարմնականը՝ երևութական, ըստ Կանտի երկու կողմերն էլ երևութական։ Շոպենհաուուէր տալիս է զուգն աշխացական տեսութեան մի ուրիշ ուղղութիւն։ նա համարում է իրականութեան ներքին, հոգեկան կողմը կամք, կամ ուրիշ խօսքով հոգեկան կեանքը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ կամք, իսկ մարմնական աշխարհը՝ նրա արտաքին արտայայտութիւնը կամ երևոյթը Վերջին ժամանակներում Ֆեինէրը, յենուելով Սպինոզայի տեսութեան վրայ, զարգացրեց իր Փիղիկա-հոգեկան աշխարհահայեացքը, ընդունելով բնութեան մէջ թէ Փիղիքական աշխարհը և թէ հոգեկան կեանքը հաւասար չափով իրական։ նոյն շաւզով է գնում Վունդտ, միայն թէ նա իմացաբանական խորհրդածութիւններով գերակշռութիւն է

տալիս հոգեկան կողմին նրա հիմնական հայեացքը իդէալիստական է: Այս հանգամանքն առանձին ուշադրութեան արժանի է մանաւանդ այն պատճառով, որ Վունդտ առաջինը ամենալուրջ փորձերն արեց հոգեկան երևոյթները զուտ բնախօսականի վերածելու և հոգեբաններից այս տեսութեան կողմնակից են Հեֆդինգ (Höffding, Psychologie in Umrissen) Խոդ (Lehrbuch der Psychologie) երբինգառու (Grundzüge der Psychologie):

Զուգընթացական տեսութիւնն ամենից աւելի է համապատասխանում ինչպէս բնագիտական, այնպէս և փիլիսոփայական մտածողութեանը: Բնագիտական մտածողութեանը նրանով, որ հնարաւորութիւն է տալիս Փիզիքական երևոյթները զուտ Փիզիքական պատճառներից բացատրելու: Ամենայն ինչ, որ իրական է Փիզիքական աշխարհի մէջ, ենթարկում է Փիզիքական պատճառական շարքին, նրա մի օղակն է: ամեն մի Փիզիքական երևոյթ առաջ է բերում Փիզիքական երևոյթ: այս շարքը չի ընդմիջւում հոգեկան երևոյթներով, այսինքն սրանք չեն կարող Փիզիքական երևոյթների պատճառ կամ հետեանք լինել: Սա մի այնպիսի հայեացք է, որ բնագիտական մտածողութեան հիմքն է կազմում: մի այնպիսի դուալիզմ, որ ըստ բոնում է աշխարհը երկու այլասեռ տարրերից, այն է մարմնից և հոգուց բաղկացած որոնք միմեանց վրայ ազդում են, բնագիտական մտածողութիւնն ընդ միշտ կը մերժէ: Նա չի կարող հաշտուել այն հայեացքի հետ, թէ գոյութիւն ունին էութիւններ կամ էակներ, որոնք Փիզիքական աշխարհում ներգործութիւն են առաջ բերում, առանց իրանք Փիզիքական լինելու:

Զուգընթացական տեսութիւնը համապատասխանում է նոյնպէս փիլիսոփայական մտածողութեան պահանջներին: Նա հիմնում է բնագանցական իդէալիզմը բնութեան փիլիսոփայութեան վրայ: իրողութիւն է, որ բացի Փիզիքական աշխարհից, բնութեան մէջ կան հոգեկան երևոյթներ, որոնք ոչ մի կերպով Փիզիքական երևոյթների չեն վերածում: իրականութիւնը բաժանում է նիւթականի և հոգեկանի: առաջինը մենք ճանաչում ենք մեր զգայարանների միջոցով, իսկ հոգեկանը՝ ինքնագիտակցութեամբ: մարմնական աշխարհն զգայութիւնների գումար է և այս տեսակէտից երևութեական: Մեր գիտակցութիւնն ըմբռնում է զգայութիւնների գումարը իրեն մարմինների համակարգութիւն, սակայն ոչ բացարձակ իրական, այլ իրեն երևոյթ: բնագանցական խորհրդանշութիւնը բացա-

արում է, որ այդ երևոյթը արտայայտութիւն է ինքն ըստ ինքեան գոյութիւն ունեցող մի իրականութեան, որը մենք անմիջապէս ըմբռնում ենք միմիայն ինքնագիտակցութեան մէջ։ Այսպիսով արտաքին աշխարհը, որ մենք ըմբռնում ենք զգայարաններով, և հոգեկան աշխարհը, որ ճանաչում ենք անմիջական գիտակցութեամբ, նոյն էութեան երկու կողմերը կամ արտայայտութիւններն են։ Հոգեկան երևոյթները անմիջապէս ներկայանում են մեր՝ մարդկային գիտակցութեանը, սովորական միտքը արտաքին նշանների անալոգիայով եղանակացնում է, հոգեկան կեանք գոյութիւն ունի նաև կենդանիների մէջ։ այդ հաստատում և հպաղողում է դառնում գիտական հետազօտութիւնների չնորհիւ։ մետաֆիզիկ գիլիսոփան զուտ բնազանցական խորհրդածութիւններով աւելի առաջ է գնում և ընդունում է հոգեկան կեանք ամբողջ մարմնական աշխարհի, ամբողջ տիեզերքի մէջ, որտեղ բոլոր նիւթական կամ մարմնական երևոյթներին համապատասխանում են և նրանց զուգընթաց կատարում են հոգեկան երևոյթներ, որոնք մեր գիտողութեանն ու փորձին չեն ենթարկւում։

Այս բոլոր խորհրդածութիւններից յետոյ բնականաբար մեր մէջ ծագուած են զանազան հարցեր. Բնչպէս պէտք է ըմբռնել հոգեկան երևոյթը, որ տեղի է ունենում նաև անօրգանական բնութեան մէջ, արդեօք գոյութիւն ունի հոգեկան գոյացութիւն կամ էակ, արդեօք կալ մի համատարած հոգի, թէ բազմաթիւ մասնաւոր հոգիներ, թնչ է նիւթական մարմինների էութիւնը, արդեօք բնութիւնը կոյք ոյժերի և պատահականութեան արդիւնք է, թէ մի բանականութեան գործ և դէպի մի նպատակ ուղղուած, այս հարցերով զբաղւում է Պաուլսէնիր գրքում, և մենք կաշխատենք հայ ընթերցողին հետզհետէ նրա հայեացքները մատչելի դարձնել։

ԴՐ. Մ. ՂԱԶԱՐԵԱՆ